

Ա. Հ. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԻ ՏԵԼԱԿԱՆ ՍՈՐՏԵՐԸ ՈՐՊԵՍ
ԵԼԱՆՅՈՒԹ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Դյուրատնտեսական կուլտուրաների բերքատվությունը բարձրացման նպատակով ձևանարկվող ընդհանուր միջոցառումների շարքում սելեկցիան հանդիսանում է կարևոր օղակներից մեկը:

Խաղողի սելեկցիայի բնագավառը ևս շատ կարևոր խնդիրներ ունի լուծելու: Եղած սորտերի լավագույն և բերքատվության բարձրացման խնդիրների հետ միասին առաջ է քաշվում ավելի արժեքավոր և բերքատու, հիվանդություններին դիմացկուն, տարբեր ժամկետի հասունացում ունեցող և զինեղործությունից առաջնությունը խաղողի ճյուղերին բավարարող նոր սորտերի ստացման հարցը: Ամենայն սրով յամբ է զրկվում ցրտադիմացկուն սորտերի ստացման հարցը, որոնք կապահովեն վազի բաց մշակությունը աղետոսածական հին շրջաններում և խաղողի կուլտուրայի տարածումը նոր՝ ավելի ցուրտ կլիմա ունեցող շրջաններում:

Այս նպատակով Գինեգործության և խաղողագործության ինստիտուտի էքսպերիմենտալ բազայում և սեպուրյակա ի նախալուծային և լուծային շրջաններում մեր կողմից սանկցվում է խաղողի մոտ 12 հազար տեղանարույն, որոնք ստացված են հիմնականում տեղական սորտերի սերմերից, տեղական սորտերի խաչածնումից, տեղական ու բերավի սորտերի խաչածնումից, տեղական և միջուրինյան ու այլ ցրտադիմացկուն սորտերի խաչածնումից ստացված սերմերից (մոտ 300 կամբինային):

Այդ սերմնաբույսերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ խաղողի տեղական և բերավի յուրարժատ սորտերը սերմերով բազմացնելու ղեկավարում, սերնդում դարգացնում են մեծ փոփոխականություն: Այդ արտահայտվում է սերմնաբույսերի մորֆոլոգիական նախկինությունների, ծաղկի կազմության, պտղի ձևի, մեծության, դույնի, հասունացման ժամանակ պտղի մեջ շաքարի և թթվության քանակության, վեգետացիոն շրջանի և այլ նախկինությունների բազմազանության մեջ (տղյուտակ 1):

Նույնանման բնույթ ունեն նաև հիբրիդային սերմնաբույսերը: Խաղողի ևրկսեռ սորտերը սերմնային սերնդում իրենց փոփոխականության բնույթով նմանվում են հիբրիդային սերմնաբույսերին, և նրանց մոտ բազմազանությունը զարգանում է առաջին իսկ սերնդից:

Սերմնաբույսերի փոփոխականության առաջնաը, նայած նրանց ծագմանը, տատանվում է. սկսած մայրական ձևերի վերարտադրումից մինչև ծայրաստիճան փոփոխված ձևեր:

Մնացական ձևի հատկությունների վերարտադրելու ընդունակությունը ավելի շատ հատուկ է տեղական հին սորտերի, ինչպես օրինակ՝ Ոսկեհատի, Ճիլարի, Մսխալի սերմնաբույսերին:

Ճաշօգի տեղական սարժերի լազմապանությունը սերմային սերնդում

Սարժի անունը	Բնակչի և կազմակերպության թիվը	Ըստ ծաղկի արդյի			Ըստ պտղի ձևի			Ըստ պտղի զույնի		
		Միջին ծաղկած	սերմնարույնի ծաղկի տիրույթը (տոկոսներով)		Վերականգնողական զորություն	սերմնարույնի պտղի ձևը (ստիստներով)		Ձգված փայտե զանգված	սերմնարույնի պտղի զույնը (տոկոսներով)	
			երկուս	Ֆունկցիոնալ իդան		կլոր	երկարավուն		սպիտակ	սև
Ոսկե հատ	51	երկուս	90,2	9,8	կլորավուն	98,0	2,0	Դեղնապտիտակավուն	98,0	2,0
Արարտաի	20	»	100,0	—	Օվալ	62,5	37,5	Կանաչավուն	94,0	6,0
Իծադուռեկ	32	»	97,0	3,0	Երկար ձվաձև	23,0	77,0	»	91,7	8,3
Ճիլար	26	»	96,0	4,0	Ձվաձև	19,2	80,8	»	100,0	—
Բանաւց	36	»	100,0	—	կլորավուն	94,0	6,0	Դեղնականաչ	100,0	—
Մոխուրի	17	»	94,0	6,0	կլոր	92,3	7,7	Դեղնավուն	100,0	—
Սպիտակ Սաթենի	27	»	85,0	15,0	ճակատակ ձվաձև	48,0	52,0	Կանաչադեղին	88,0	12,0
Սպիտակ Արաքսենի	9	»	100,0	—	երկարավուն	18,2	81,8	Դեղնականաչավուն	100,0	—
Սև Բերրի	40	»	60,0	40,0	Օվալ կամ ձվաձև	22,0	78,0	Ու	48,5	51,5
Կաթեթ	18	»	66,6	33,4	կլորավուն	100,0	—	»	33,3	66,7
Խրա-ձիթիկի	29	»	76,0	24,0	Ձվաձև	32,0	68,0	Եղանակադեղին	100,0	—
Սև Այգենի	31	Ֆունկցիոնալ իդան	71,0	29,0	Կնդաձև	83,0	17,0	Սև	36,0	64,0
Կարմիր Կախանի	33	»	78,8	21,2	Տակառակ	31,4	65,6	Դանի-պտույն	22,0	78,0
Վարդաբույր	10	»	70,0	30,0	Երկարակ	33,3	66,7	Դուր-վարդաբույն	44,4	55,6

կարևորն այն է, որ յուրարմատ հին սորտերի սերմնարույունը և նրանց հիրքիդները, ի տարբերություն մյուս բազմամյա կուլտուրաների սերմնարույունների, մեծ բազմազանություն հետ միասին, զարգացնում են միայն կուլտուրական խաղողի հատկություններ:

Խաղողի սերմնարույունը մեծ մասամբ իրենց ծնողական ձևերի համեմատությունում, ավելի կենսունակ են և այդ բարձր կենսունակությունը պահպանվում է նրանց վեղետատիվ սերնդում:

Աճեցման միևնույն պայմաններում սերմնարույունների վեղետատիվ սերունդը ավելի կենսունակ է, քան նույն հատակի կտրոններից աճեցրած մայրական սորտի վեղետատիվ սերունդը: Այդ նկատվում է հիմնականում հին սորտերի մոտ, ինչպիսին են Ռսկինաուր, Արարատին, Սպիտակ Արաքսենին, Մսխալին և այլն:

Սերմնարույունների բարձր կենսունակությունը, հատկապես այն սերմնարույունների, որոնք վերաբաղվում են իրենց սորտի հատկությունները, շատ կարևոր նշանակություն ունի վեղետատիվ բազմացման հետևանքով ձերացած հին արժեքավոր սորտերի խառնացման համար:

Խաղողի յուրարմատ սորտերի և նրանց հիրքիդների բազմազանությունը սերմնային սերնդում, կուլտուրական հատկությունների զարգացումը և բարձր կենսունակությունը լայն հնարավորություններ են ստեղծում նրանցից արժեքավոր սերմնարույուններ ընտրելու համար, իսկ փոփոխականությունը անհատական զարգացման պրոցեսում հնարավորություն է տալիս նրանց նպատակադիր դաստիարակման համար:

Խաղողի սերմնարույունները իրենց անհատական զարգացման ընթացքում շատ փոփոխական են, ընդ որում կարող են փոփոխվել շատ հատկություններով, եթե դրան նպաստում են կյանքի պայմանները: Դրա հետ միասին, ժառանգականության կայունացման ընթացքում լավանում են նրանց տնտեսապես արժեքավոր հատկությունները, բարձրանում է բերքատվությունը, խոշորանում են ոգկույզները և պտուղները, լավանում է համր, շատանում է շաքարի քանակությունը և այլն (աղյուսակ ԱՇ 2):

Այստեղ պետք է նշել, որ տնտեսապես արժեքավոր հատկությունների լավացումը սերմնարույունների անհատական զարգացման ընթացքում, ինչպես և նրանց վեղետատիվ սերնդում, սկսվում է լավ խնամքի հետ, մանավանդ բերքաավելության առաջին տարիներում:

Կուլտուրական խաղողի սերմնարույունները ավելի հեշտ են ենթարկվում գաստիարակման մենտորի և այլ պայմանների ներքո, քան այն սերմնարույունները, որոնք իրենց հատկություններով նմանվում են վայրի ծնողին:

Սերմնարույունների մեջ փաղանասություն հատկությունները զարգացնելու նպատակով, մենք մի քանի փաղանաս և միջանաս սորտերի և նրանց հիրքիդների սերմնարույունները, ինչպես և փաղանաս ու ուղանաս սորտերի խաչաձևումից ստացված սերմնարույունները իրենց զարգացման առաջին իսկ օրից ակնյայտ դաստիարակել այնպիսի պայմաններում, որոնք նպաստին նրանց մեջ փաղանասություն հատկության զարգացմանը:

Այդպիսի դաստիարակման համար նպատակավոր հանդիսացան առաջարկյալ հողակլիմայական պայմանները:

Այն հանգամանքը, որ առաջարկյալ (դոերի) հողային պայմաններում խաղողի հին կալուեսացած սորտերը ավելի շուտ են հասունանում:

Տնտեսապետությունը հանդիսանում է կայուն զարգացման առաջին պայմանը:

քան Արարատյան պաշտամությանը այլ հողերում, հիմք ծառայեց ենթադրելու, որ Լերիտասարդ սերմնարույանը այդ պայմաններում դաստիարակվելու միջոցով հնարավոր էլինի նրանց մեջ զարգացնել վաղահասուն լիցան հատկությունը:

Այլ պայմաններում դաստիարակված սերմնարույաներից մենք ընտրել ենք 19 արմարավոր սերմնարույան, որոնք աչքի են բնկնում գերազանցահասունությամբ, բարձր բերքով և սրահական ցուցանիշներով:

Դրանցից մի քանիսը միջուրինյան Սեյանից Մալինյա սորտի սերմնարույաներ են, որոնք հուլիսի 23-ին ունենին 19—20 տոկոս չաքար: Նույն պայմաններում մալրական սորտի բույսերը այդ նույն ժամկետում ունենին 15,8 տոկոս, իսկ տեղական վաղահաս Սպիտակ Արաքսենի սորտի բույսերը 14,2 տոկոս չաքար:

Այսպիսով կարող ենք ասել, որ ինչպես ցուրտ կլիմայական պայմանները բարենպաստ միջավայր են Լերիտասարդ սերմնարույաների մեջ ցրտադիմացկանություն հատկությունը զարգացնելու համար, այնպես էլ ճառագարանի հողակլիմայական պայմանները հարավային թեքություններում են վաղահասունության հատկության զարգացմանը նրանց մեջ:

Դաստիարակման նման մեթոդ մենք պործադրում ենք նաև սերմնարույաների մեջ ցրտադիմացկանություն հատկությունը զարգացնելու նպատակով:

Սկսած 1949 թվականից մենք տեղական և միջուրինյան սորտի սերմնարույաները, նրանց հիբրիդները, ինչպես և միայն տեղական սորտերի հիբրիդիզացիայից ստացված սերմնարույաները աճեցնում ենք ռեսպուբլիկայի տարբեր գոնաններում, որոնք գտնվում են ծովի մակերևույթից տարբեր բարձրություն վրա, սկսած 1150 մինչև 1940 մետր ծովի մակերևույթից, բարձր տարբեր կլիմայական պայմաններում:

Նախնական արդյունքները ցույց են տալիս, որ խաղողի բույսերը տարբեր կլիմայական պայմաններում աճեցնելու պնդում, որքան աճեցման վայրը բարձր է գտնվում ծովի մակերևույթից, և որքան ցուրտ է այդտեղի կլիման, այնքան բարձր է նրանց փայտացման աստիճանը:

Սակայն հարավային ծաղում ունեցող հին սորտերի բույսերի մոտ այդ տեղի է ունենում մինչև որոշ սահման. զարգացման ավելի կրիստալիկան պայմաններում—այն է՝ 1780 և ավելի մետր ծովի մակերևույթից բարձր ցուրտ պայմաններում իջնում է նրանց փայտացման աստիճանը:

Հյուսիսային ծաղում ունեցող միջուրինյան սորտերի բույսերը, որոնք հարմարված են ցուրտ կլիմայական պայմաններին, նույնպես բառ տեղի բարձրության (ծովի մակերևույթից) սկսում են աճեցողությամբ հետ մնալ, սակայն նրանց փայտացման աստիճանը բարձրանում է աճեցման բոլոր պայմաններում:

Տեղական սորտերից ստացված հիբրիդ սերմնարույաները, հնայած իրենց հարավային ծագմանը, այդ նույն պայմաններում իրենց զարգացման բնույթով նմանվում են հյուսիսից բերված ցրտադիմացկուն սորտերին:

Այլ բացատրվում է նրանով, որ խաղողի սերմնարույաները, անկախ նրանց ծագումից, լինելով ժառանգականորեն խախտված օրգանիզմներ, նոր անսովոր պայմաններում աճեցնելիս էլ ավելի է խախտվում նրանց ժառանգականությունը և նրանք ավելի լավ են հարմարվում տեղի պայ-

մաններին, վերափոխվելով գեղի ցրտագիմացկանությունը, որը արտահայտվում է նրանց փայտացման բարձր աստիճանով: Հայտնի է, որ սերմնաբույսերի վաղ փայտացումը ցուրտ կլիմայական պայմաններում, նշան է նրանց ցրտադիմացկանության (Ի. Վ. Միչուրին):

Սերմնաբույսերի աչգալիսի բնույթը ասում է նաև այն մասին, որ ոչ ցրտադիմացկուն երիտասարդ օրգանիզմների ցուրտ պայմաններին հարմարվելու հատկությունը, տվյալ դեպքում, պայմանավորվում է ձմռանը նախորդող բույսի զարգացման պայմաններով և վեգետացիայի բնթացքում նրանց մեջ տեղի ունեցող նյութափոխանակության հատուկ բնույթով:

Տարբեր կլիմայական պայմաններում աճեցված բույսերի մի մասը 1953 թ. բերքի են եկել, որոնցից շատերը վաղահաս են:

Լենինականի պայմաններում սեպտեմբերի 18-ին հասունացած խաղողը ուներ 20 և ավելի տոկոս չաքարայնություն: Հետաքրքիր է նշել, որ այդ սորտերի մյուս սերմնաբույսերը Երևանի պայմաններում դեռ բերքի չեն եկել:

Այդ ևս ապացուցում է, որ խաղողի սերմնաբույսերը զարգացման անսովոր պայմաններում հիմնովին վերափոխվում են, հարմարվելով գոթյան պայմաններին, որակի բույսի վեգետացիոն շրջանը անհամեմատ ավելի կարճ է, քան ցածրագիր շրջաններում:

Կարեևորն այստեղ այն է, որ նշված կլիմայական պայմաններում այդ փոփոխությունը գեղի ցրտագիմացկանությունը կարճ վեգետացիոն շրջանով, ինքնակա են նաև հարավային սորտերի սերմնաբույսերը, ավելի զնայում մեր տեղական բարձրորակ սորտերի սերմնաբույսերը:

Այդ վիճակում է այն մասին, որ տեղական սորտերի և նրանց խաչաձևումից ուտացված սերմնաբույսերից դաստիարակման այս միջոցով հնարավոր է ստանալ այնպիսի սորտեր, որոնք բարձր ցրտադիմացկանության հետ միասին, ունենան և բարձր որակ:

Նշված հարցերի ուսումնասիրությունն բնթացքում, հաշվի առնելով սերմնաբույսերի փոփոխական բնույթը, բարձր կենսունակությունը, գոստիարակման հնարավորությունները, մենք բերքի եկած 1500 սերմնաբույսերից քնտրել ենք 85-ից ավելի արժեքավոր սերմնաբույսեր, սրանցից նոր սորտեր ստանալու նպատակով:

Ստորև բերում ենք դրանցից մի քանիսի համառոտ նկարագրությունը: Սերմնաբույս N 8/12 — Սպիտակ Արաքսենի սորտի սերմնաբույս է:

Ծաղիկը երկսեռ, պտուղը սպիտակ դեղնավուն, յրիվ հասունացման ժամանակ վարդադույն երանգով: Միջահաս, իր նշանակությունով ունի վերսալ: Պտուղն է սեղանի և յուրահատուկ համով քաղցր գեներատային գինի պատրաստելու համար: Բերքը սեպտեմբերի 2-րդ կեսին քաղելու դեպքում, պտուղն է նաև չամչի և կախանի համար: Քարձ բերքատու սորտ է, երկրորդական բողբոջներից բերք յուրաքանչյուր հեկտարում ունի, որը շատ կարեւոր է զարնանային ցրտահարությունների և կարկտահարությունների դեպքում:

Հեկտարից կարող է տալ 25 և ավելի տոննա բերք:

Գինին Գինեզործություն և խաղողագործություն ինստիտուտի Վեգետացիոն հանձնաժողովի կողմից ստացել է 8 բալ գնահատական — 10 հնարավորից (նկ. 1):



Նկ. 1. Սպիտակ Արարիկի սորտի սերմնարույս N 8 12

Սերմնարույս N 743—Ոսկեհատ սորտի սերմնարույս է: Իր բոլոր հատկութիւններով նման է Ոսկեհատին և բերքատալությամբ պղպիտի չափով գերազանցում է նրան: Աչքակարոններով բազմապնէլիս տնկման չոր-բարդ տարում քերքատալության 2-րդ տարում, մեկ վազի միջին բերքը կազմում է 7 կգ, 530 գ, իսկ տոննձին վազեր տալիս են 16 կգ: Լըիվ բերքատալության ժամանակ կտրելի է հեկտարից ստանալ 25 տոննայից ոչ պակաս բերք: Գինու խաղող է, տալիս է միայն սեղանի գինի, յուրահատուկ դուրեկան բուկետով (նկ. 2):

Սերմնարույս N 14—Կարմիր Կախանի սորտի սերմնարույս է: Ծաղիկը երկսեռ, ողկույզի արտաքին ձևով և խոտի թյամբ նման է Ոսկեհատին, միայն ավելի խոշոր ողկույզներով և պտուղներով: Պտղի գույնով նման է Կարմիր Կախանուն:

Հալանական է, այս սերմնարույսը առաջացել է Կարմիր Կախանի և Ոսկեհատ սորտերի բնական հիբրիդիզացիայից: Որպէս սեղանի խաղող ունի դուրեկան համ և հարուստ տեսք: Տալիս է սեղանի լավ գինի, ըստ որում, արապ խերեսանալու հատկությամբ: Ծաղիկը երկսեռ:

Հեկտարից տալիս է 25—30 տոննա բերք (նկ. 3):

Սերմնարույս N 774—սառցիված է Թավրիզենի և Նազելի սորտերի խաչաձևումից: Ծաղիկը երկսեռ: Մաշտոյք նման է Նազելի սորտին, չկարգադած սերմերով, ավելի բերքատու և ամուր պտղակոթով: Պիտանի է սրպէս սեղանի և չամչի խաղող, նաև սեղանի թէթի գինի պատրաստելու համար: Բերքատալության երկրորդ տարում այս սերմնարույսը տալիս է 13 կգ բերք (նկ. 4):

Սերմնարույս N 79—սառցիված է Իծապատիկ և Վարդապետ Ներսանի սորտերի խաչաձևումից: Երկտեսարգ հաստկում գաւառաբաղման նպատակով պատվաստված է Արարատի սորտից վերցրած պտտվաստակալի վրա:



Նկ. 2. Ուզիկառու սորտի սերժաբույս Ա 7 12




Նկ. 3. Կարճիկ զախանի սորտի սերժաբույս Ա 1 1



Նկ. 4. Թավրիզենի X Նազի խաղողի սերմնաբույս № 7711

Սեղանի ուշահաս խաղող է, խոշոր սղկույզներով և պտուղներով, պտերկան համով և գեղեցիկ արտաքին տեսքով, հեկտարից ասուխ է 25-ից ավելի տոննա բերք (Նկ. 5)։



Նկ. 5. Իթապուռկ X Վարդաղույն Ներսիսի սերմնաբույս № 79

Սերմնարույն № 15՝ 2 — ստացված է Ս. Մալենկոյա և Սապերաֆի, ինչպես և այլ սորտերի փոխա խառնուրդով խաչաձևումից: Դինու խաղող է, այս սերմնարույնի առավելությունը կայանում է նրանում, որ պտղամիսը և հյութը զուսմարմած է մուգ կարմիր գույնով: Բարձր բերքատու է, անգամ բնափայտից զարգացած չվերր բերք են կտրմակերպում: Բերքատրվության երկրորդ տարում (անկման 4-րդ աստիճան) մեկ խիի միջին բերքը կտրվում է 2 կգ, 750 դ. առանձին վազերի մոտ մինչև 10,5 կգ. (նկ. 6):




Նկ. 6. Ս. Մալենկոյա Սապերաֆի սերմնարույն № 15՝ 2

Ուշագրավ է Հադիսի № 1 կլոնը, որի մայրական լույսը հայտնաբերել ենք Կոտայքի շրջանի Բաշ գյուղից վեր դոնովոյ Հադիս ստրի ստորոտում, մեկ ժայռի վրա: Բնական պայմաններում տնած այգ սերմնարույնը ունի լավ կույտուրական տեսք: Ենթադրում ենք, որ առաջացել է մեր տեղական կույտուրական սորտերի սերմերից, որոնց հավանական է խոչուններն են չերել այդ ժայռի ճեղքվածքը (նկ. 7, 8): Աճելով բնական պայմաններում առանց ձմեռը ծածկելու, մյուս կողմից շնորհիվ տեղի հորափայլի Թեպուխյան, մոտամբ ապաստված լինելով բնական արհավիրքներից, այդ սերմնարույնը առանձնապես հարմարվել է տեղի ցուրտ պայմաններին: 1948—49 թթ. ձմեռը Կոտայքի և Երևանի շրջաններում ամենացուրտ ձմեռն է եղել վերջին տարիների բնապայծառ: Այդ սերմնարույնը բոլորովին չէր վնասվել պրտերից: 1949 թ. փոքր պարանոց այս սերմնարույնից կտրոններ ենք վերցրել, որոնցից տնեցրած բույսերը ձմեռը չենք ծածկում:

Այդ սերմնարույնի պրատիկականությունը առանձին մեկ համար դեռ լրիվ պարզված չէ, բայց ենթադրում ենք, որ պետք է պրատիկականություն լինի և որակավորված: Ազկույզը և պողի արտաքին տեսքը նմանվում է Արենի սորտին, բայց շատ ավելի բարձր բերքատվությամբ: Սեպտեմբերի 15-ին պտուղների մեջ շաքարը կտրվում էր 25 տոկոս, թթվու-



Նկ. 7. Հաղիտի № 1-ին կլոնի մայրական բույսը բնական պայմաններում:



Նկ. 8. Հաղիտի № 1 կլոնը մշակութային պայմաններում:

թյունը 7,2 պրոմիլ, որպիսի ցուցանիշները զինու մատերիսով ստանալու համար ավելի քան լավասար են:

Տեղական սորտերի հիբրիդիզացիայից ալոմեքսովոր կոտններ ունի ստացված նաև Վ. Վ. Սարգսյանը, որոնցից ամենատարձրավորներն են՝ Գառանդմով $\times$ Վարդուցույն Մուսկատ, Թավրիզենի $\times$ Նազելի, Թավրիզենի $\times$ Մարմարի, Սմրտրի $\times$ Ոսկեհատ, Ոսկեհատ $\times$ Սև Արաքսենի, որոնցից ստացված զինիները գեղատեսուցիուն համեմատադրվի կոդմից ստացել են 7 և ավելի բարձր բալով գնահատական:

Վերը նշված արժեքավոր սերմնաբույսերից 9 հեկտար տնկված է արտադրություն պայմաններում, և միաժամանակ շարունակում ենք նրանց արող բազմացումը:

Հետադրօր սվայներ են ստացվել նոր առաջացրած մի քանի սերմնաբույսերի պտղի չափարի և թվովության հարաբերության վերաբերյալ, որը կարևոր նշան է գինեգործության համար:

Հայտնի է, որ հարավի պայմաններում մշակվող խաղողի համարյա բոլոր սորտերը ունեն զածր թվովության, որը իջեցնում է նրանց արժանիքները որպես սեղանի գինու խաղողի: Այս հատուկ է նաև Արարատյան գաղաղավայրում մշակվող խաղողի համարյա բոլոր սորտերին:

Գինեգործները այդ վերագրում են առաջ կլիմայական պայմանների ազդեցությանը և գտնում են, որ հարավի պայմաններում մշակվող խաղողի մոտ բարձր չափաբանություններն անհամապատասխան է բարձր թվովության հետ: Մեր փորձնական աշխատանքներից ստացված արդյունքները միասում են այդ իշխող կարծիքը:

1951—1952 թթ. բնիպայում բնորոշված արժեքավոր սերմնաբույսերից (թե՛ տեղական և թե՛ բերվելի սորտերի սերնյում շատերը աչքի են ընկնում իրենց բարձր չափաբանությամբ և թվովությամբ (աղյուսակ 3):

Աղյուսակ № 3

Շաքարի և թվովության պարունակումը խաղողի սերմնաբույսերի մոտ հարավի պայմաններում

Սորտի անունը	Նմուշ վերցնելու մակերեսներ	Շաքար տոկոսներով	Տիրաբեղ թվովության պարունակություն
Գախեթ—կոնտրոլ	23/9	21,2	5,04
Գախեթ սերմնաբույս № 9/1	10/9	23,4	6,66
» » № 9/3	6/9	25,5	9,72
Սպիտակ Աղարա—կոնտրոլ	16/9	20,2	6,93
» սերմնաբույս № 30/13	11/9	25,6	8,54
Մուսկատ մանիշակագույն—կոնտրոլ	16/9	29,9	6,30
» սերմնաբույս № 33/3	8/9	26,7	5,3
» » № 33/8	8/9	29,1	12,00
Պարմենտ—կոնտրոլ	22/9	22,6	7,92
» սերմնաբույս № 73/3	8/9	27,5	9,60
Ոսկեհատ—կոնտրոլ	18/9	23,5	5,79
» սերմնաբույս № 7/37	19/9	24,2	9,20
» » № 7/62	19/9	24,6	8,80

Այդ սերմնարույսերի բերքից պատրաստած գինու անալիզները (գինեգործներ Ն. Ն. Աճեմյան, Մ. Ն. Աճեմյան, Մ. Ք. Ալավերդյան) ցույց տվեցին, որ այդ գինիները բարձր սպիրտի մոկայությունով պարունակում են նաև մեծ քանակությամբ օրգանական թթուներ:

Հետևապես հարավի տաք պայմաններում նախափոր է խաղողի պտղի մեջ բարձր շաքարի և թթվության համասեղումը. որը շատ հետաքրքիր է և նոր հետազոտություններ է բաց անում գինեգործության ասպարիզում: Այդ ուղղությամբ մեր կողմից տարվում են հատուկ աշխատանքներ և կան որոշակի գրական արդյունքներ:

Վերը նշված արձեքավոր սերմնարույսերը բնորոշ ենք համեմատաբար դեռ քիչ քանակի բերքի նկատմամբ սերմնարույսերից (1500 սերմնարույսերից եղած 13 հազարից):

Մեր կողմից ստեղծած այդ սելեկցիոն մատերիալը պարունակում է իր մեջ անասնման նախափորություններ հետադաժում լուծելու այգեգործությանը և գինեգործությանը վերաբերող մի շարք կարևոր տեսական և պրակտիկ խնդիրներ:

Հայտնի ՍՍՏ Սնդիկ և ՔԱՄԻ

արդյունաբերության մինիստրության
Գինեգործության և խաղողագործության
ինստիտուտ

Ստափել է 10 X 1933 թ.

С. А. Погосян

Местные сорта винограда Армении, как исходный материал для селекции.

Р е з ю м е

Изучение природы семенных растений многих сортов корнесобственного местного винограда и их гибридов (примерно 12000 семян) показало большое разнообразие семян в пределах потомства и индивидуальном их развитии. Наряду с большой изменчивостью, характерным для них является развитие свойств и признаков исключительно культурной лозы.

В одинаковых условиях выращивания вегетативное потомство семян стародавних сортов обладает большей жизненностью, чем одновозрастные растения вегетативного потомства исходных сортов.

Изменчивая природа семян винограда, в сочетании с повышенной жизненностью, создает большие возможности их направленного воспитания под влиянием ментора и других условий, с целью развития в них желаемых свойств и устранения отдельных дефектов.

Благодаря указанным особенностям семена местных сортов корнесобственного винограда и их гибридов являются богатым материалом для создания из них новых высококачественных, урожайных сортов винограда различных сроков созревания и различного хозяйственного назначения.